ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
21 հունվարի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 26 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պարտականությունները կատարող Արմեն Փամբուխչյանը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման հավելվածի 72-րդ կետի և Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունվարի 17-ի N 132-Ա որոշման համաձայն՝ 2025 թվականի հունվարի 21-ին գումարված Երևանի ավագանու արտահերթ նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 26 անդամ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավագանու նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա են որոշում ընդունելու համար անհրաժեշտ թվով ավագանու անդամներ:

Հաշվի առնելով, որ Երևանի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի արտահերթ նիստին ներկա է ավագանու 26 անդամ, ուստի՝ նիստն իրավազոր չէ և քվորում չի ապահովվել:

Հետևաբար, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 71-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պարտականությունները կատարող Արմեն Փամբուխչյանը հայտարարեց 30 րոպե տևողությամբ ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 10.30-ին:

2025 թվականի հունվարի 21-ին գումարված Երևանի ավագանու արտահերթ նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 27 անդամ:

Հաշվի առնելով, որ 2025 թվականի հունվարի 21-ի արտահերթ նիստին ներկա են ավագանու 27 անդամ և նիստն իրավազոր չէ, ուստի՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 71-րդ կետի 2-րդ ենթակետը՝ նիստը համարվում է չկայացած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան